«Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Հաստատում եմ
Տնօրեն _____

Ստուգված է
Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով՝ _____

«Հայերենը բոլորի համար»

Խմբակի ծրագիր

2023-2024 ուստարի

«Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

«Հայերենը բոլորի համար»

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

(շաբաթական 2 ժամ, տարեկան՝ 60 ժամ)

Ծրագրում ներառված են թեմաներ, որոնք համապատասխանում են ռուսերենով ուսուցմամբ դասարաններում ընդգրկված սովորողների կարիքներին: Ծրագրում նշված է շաբաթական և տարեկան ժամաքանակները, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:

Խմբակը նախատեսված է այն սովորողների համար, ովքեր եկել են այլ երկրներից ու ընդգրկվել ռուսերենով ուսուցմամբ դասարաններում և այդ երկրներում հայոց լեզուն չուսումնասիրելու պատճառով ծրագրային նյութը յուրացնելուն զուգահեռ կարիք ունեն տառուսուցման: Այդ սովորողների համար հայոց լեզվի ուսուցումն ու դասապրոցեսը առավել արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկվել է մեկնարկել այս խմբակը, որի ընթացում կկազմակերպվի սովորողների տառուսուցումն ու նախորդ տարիների ծրագրային նյութի յուրացումը:

Ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով, որը կազմված է հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Խնդիրները
4. Վերջնարդյունքները
5. Բովանդակությունը

ԽԱՂՈՒՍՈՒՑՈՒՄ ՆԿԱՐՆԵՐՈՎ (6 ժամ)
Նպատակը
Զարգացնել սովորողների բանավոր խոսքը
Խնդիրներ
Ընկալել պատկերվող նկարների բովանդակությունը, սյուժեն, գույները կառուցվածքը, ծավալը

Վերջնարդյունքներ
Կարողանալ տվյալ նկարի շուրջ կազմել գրագետ նախադասություններ՝ դարձնելով տեքստ
Բովանդակություն
1. Բանավոր խոսքի զարգացում (3 ժամ) 2. Նկարների միջոցով տեքստերի կազմում և վերլուծություն (3 ժամ)

Այբբենական շրջան (18 ժամ)
Նպատակը
1. Ձևավորել հնչյունները ճիշտ արտասանելու հմտություններ 2. Ծանոթացնել տառերի գրությունը
Խնդիրներ
Տարբերակի ձայնավոր և բաղաձայն հնչյունները
Վերջնարդյունքներ
Կարողանալ ճիշտ գրել և արտաբերել բառերը՝ նշելով հնչյունների և տառերի քանակը
Բովանդակություն
1. Տառուսուցում (14 ժամ) 2. Ձայնավոր և բաղաձայն հնչյունների տարբերակում (4 ժամ)

Գրուսուցման շրջան (18 ժամ)
Նպատակը
Դիդակտիկ նյութերի միջոցով ներկայացնել տառերի և հնչյունների դիրքը բառասկզբում և բառամիջում՝ խթանելով նոր բառերի կազմություն այդ հնչյուններով և տառերով
Խնդիրներ
Ներկայացնել բոլոր հնչյուն-տառերը, դրանց մեծատառերի և փոքրատառերի գրությունը
Վերջնարդյունքներ
Կարողանալ ճանաչել և արտաբերել բոլոր հնչյունները, ճանաչել և գրել բոլոր տառերը, կազմել նոր բառեր՝ օգտագործելով մեծատառեր անհրաժեշտության դեպքում

Բովանդակություն
1. Բառերի կազմում (3 ժամ) 2. Պաստառների կազմում և գունազարդում՝ ձայնավոր և բաղաձայն հնչյունների տարբերակում (6 ժամ) 3. Երկշարք և եռաշարք բաղաձայնների դասավանդման մեթոդական մշակումներ (6 ժամ) 4. Ամրապնդում (3 ժամ)

Հետայբբենական շրջան (18 ժամ)
Նպատակը
Զարգացնել կարդալու և գրելու տեխնիկա Ամփոփել և համակարգել գիտելիքը Նախապատրաստել բացատրական ընթերցանությանը
Խնդիրներ
Բնագրի ընթերցում ուսուցչի և սովորողների կողմից, բառային աշխատանք, բովանդակության վերարտադրում, զրույց, ամփոփում
Վերջնարդյունքներ
Կարողանալ գրել և կարդալ տեքստեր,ձևակերպել բանավոր և գրավոր խոսք
Բովանդակություն
1. Հայերենի այբուբենի արտասանություն՝ տառերի անուններով (2 ժամ) 2. Տեքստերի ընթերցում (5 ժամ) 3. Բառային և տեքստային աշխատանքներ և թելադրություններ (6 ժամ) 4. Անցած նյութերի ամրապնդում (5 ժամ)